ՔԱՐՏԻ ՉԱՓԻՑ ՇԱՏ ՓՈԽԱՐԻՆՄԱՆ ԶԳՈՒՇԱՑՄԱՆ ՆԱՄԱԿ

Ամսաթիվ _____

_____
Հաճախորդի (կենցաղի գլխի) անունը

_____
Հասցե

_____
Քաղաք, նահանգ և փոստային կոդ

_____
Կենցաղի համարը/Վարչաշրջանի գործի համարը

Հարգելի _____,

Մեր համակարգչային արձանագրությունները ցույց են տալիս, որ վերջին 12 ամսվա ընթացքում Դուք օգտագործել եք չորս կամ ավելի Էլեկտրոնային նպաստի փոխանցման (Electronic Benefit Transfer, EBT) նոր քարտեր: Սա նշանակում է, որ հնարավոր է, Դուք խնդիր ունեք ձեր EBT քարտի հետ և/կամ հնարավոր է, որ ձեր CalFresh նպաստները չարաշահվում են: Դուք կարող եք նույն EBT քարտն օգտագործել ամեն ամիս, քանի դեռ ստանում եք ձեր սննդի նպաստները: Եթե խնդիր ունեք ձեր EBT քարտի հետ, խնդրում ենք զանգահարել EBT Հաճախորդների սպասարկման օգնության գիծ՝ 877-328-9677 հեռախոսահամարով, կամ կապնվել ձեր վարչաշրջանի աշխատողի հետ՝ տեղեկանալու համար, թե ինչպես պետք է օգտագործեք ձեր քարտը:

Դուք խախտում եք օրենքը, եթե անում եք կամ փորձում եք անել հետևյալը՝ գնել, վաճառել, գողանալ կամ փոխանակել EBT քարտեր կամ CalFresh նպաստներ: Համակարգիչը հետևում է EBT բոլոր վաճառքներին ու քարտերի փոխարինումներին: Մենք անում ենք դա համոզվելու համար, որ քարտերը ճիշտ են օգտագործվում, ինչպես նաև CalFresh ծրագիրը չարաշահումից պաշտպանելու համար: Հիմնվելով այդ համակարգչային արձանագրությունների վրա՝ մենք կարող ենք հետախուզել ձեր EBT քարտի որևէ չարաշահում: Եթե հաստատվի, որ Դուք չարաշահել եք ձեր EBT քարտը, ապա ձեր նպաստները կարող են դադարեցվել, հնարավոր է, որ Դուք ստիպված լինեք հետ վճարել նպաստների համար, ձեզ կարող են տուգանել կամ բանտ ուղարկել:

Ձեր CalFresh նպաստները պահպանելու համար՝ հիշեցնում ենք ձեզ, որ դրանք կարող են օգտագործվել միայն ձեզ կամ ձեր կենցաղի համար սնունդ գնելու համար կամ ձեր կենցաղի սնունդն աճեցնելու նպատակով սերմեր գնելու համար: Դուք կարող եք օգտագործել ձեր EBT քարտն այս նպատակների համար: Այս նամակը չի փոխում ձեր CalFresh նպաստները, սակայն վարչաշրջանը կկցի այս նամակի պատճենը ձեր գործի ֆայլին:

Այժմ ոչինչ պետք չէ անել. միայն համոզվեք, որ ճիշտ եք օգտագործում ձեր նպաստները: Եթե որևէ հարցեր ունեք այս նամակի վերաբերյալ, խնդրում ենք դիմել՝ _____:
(վարչաշրջանի կոնտակտային հեռախոսահամարը)